Հաշվետվություն

2023 թվականի հունիսի 14-ից 16-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգ, հունիսի 14-ից 16-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «XXVI միջազգային տնտեսական համաժողովի (ՊՄՏՀ) շրջանակներում կազմակերպված «Տարածքների գույքագրում: Տարածական տվյալների կիրառման նոր հնարավորություններ» խորագրով նստաշրջանին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին հետևյալ հարցերը.
   - ՀՀ կադաստրի կոմիտեի և ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության (ՌՈՍՌԵԵՍՏՐ) միջև ստորագրված 2022-2025 թվականների ընթացքում իրավունքների գրանցման, անշարժ գույքի օբյեկտների կադաստրային հաշվառման, գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի՝ ներառյալ գերատեսչությունների գործունեության թվայնացման, ինչպես նաև վերոնշյալ ուղղություններով գործընթացների թվային վերափոխման և վերաիմաստավորման հետ կապված փորձի փոխանակման վերաբերյալ ճանապարհային քարտեզի գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքների շարունակությունը,
   - երկկողմ համագործակցության հետագա զարգացման ուղղությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ միջոցառմանը Կադաստրի կոմիտեն ներկայացրել է կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը: Պանելային քննարկումներին մասնակցել են ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության (ՌՈՍՌԵԵՍՏՐ), Ուզբեկստանի քարտեզագրական գերատեսչության ղեկավարները, Պետդումայի պատգամավորներ, ինչպես նաև գործարար և ակադեմիական համայնքների ներկայացուցիչներ և այլ պաշտոնատար անձինք:

«ՌՈՍՌԵԵՍՏՐ»-ի ներկայացուցիչները զեկույցներ են ներկայացրել գերատեսչության գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունում հողերի կառավարման, հողերի նկատմամբ պետական վերահսկողության և հողային վեճերի լուծման օրենսդրության առանձնահատկությունների վերաբերյալ:

Կոմիտեի ղեկավարը հանդես է եկել «Հայաստանի Հանրապետության ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ներկա իրավիճակի մասին» զեկույցով: Ընդգծելով պետական կառավարման և այլ ոլորտներում հավաստի և բարձրաժեք տարածական տվյալների կիրառության կարևորությունը՝ Սուրեն Թովմասյանն անդրադարձել է Կադաստրի կոմիտեի կողմից նախաձեռնված ծրագրերին, մասնավորապես Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքին, ազգային գեոպորտալի ներդրմանը և զարգացման հեռանկարներին: Անդրադարձ է կատարվել նաև տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման համար անհրաժեշտ իրավական հիմքերին, որոնք սահմանվել են «Տարածական տվյալների մասին» և «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» տարեսկզբին ընդունված ՀՀ օրենքներով: Կարևորվել են տարածական տվյալների հավաքագրման, մշակման, տարածման և փոխանակման գործընթացում երկկողմ և բազմակողմ միջազգային համագործակցության շրջանակներում փորձի փոխանակումը, ստանդարտների ներդրմանն ուղղված գործողությունների անհրաժեշտությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակում կայացած հանդիպումների, քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնելու շփումները մասնագիտական շրջանակների ներգրավմամբ, նպաստելու առցանց միջոցառումների, հնարավորության դեպքում նաև ընդլայնված կազմով փոխայցերի կազմակերպմանը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Կայացել է Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի և ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության ղեկավար Օլեգ Սկուֆինսկու հանդիպումը, որի ընթացքում կոմիտեի ղեկավարը ՌԴ լիազոր մարմնի ներկայացուցիչներին հրավիրել է Հայաստան՝ տեղում ծանոթանալու տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում իրականացվող աշխատանքներին:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան 19.06.2023 թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 01.06.2023 թ. N 593-Ա որոշում
Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը Ռուսաստանի Դաշնություն քաղաք Սանկտ Պետերբուրգ
5. Գործուղման ժամկետները 14.06.2023-16.06.2023թթ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
   1. գիշերավարձ,
   2. օրապահիկ
   3. ճանապարհածախս

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Սուրեն Թովմասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը **Էկոնոմ դաս**		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	145.000	145.000
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	113 $	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43.756	43.756
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	87.512	87.512
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	56 $	

	Վճարը 1 օրվա համար (դրամ)	21.684	21.684
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	65.053	65.053
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		297.565	297.565

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան